

Մերգեյ Ա. Աղաջանյան
Բանաս. զիր. քեկնածու

ԵՊԵԼՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔԱՎԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ*

Մարդկության մշակութաստեղծ գործունեության ողջ ընթացքի մեծագույն ձեռքբերումը խոսքն է:

Եվ բոլորովին էլ կարևոր չէ, թե նարդու բանական-մշակութաստեղծ լինելը բացարելու փորձերից (կրոնական, աշխատանքային-էնգելյան, գենետիկ-կենսաբանական և այլն) ո՞ր տեսակետի կողմնակիցը կարող է լինել յուրաքանչյուր որ: Կարևոր է հետևյալ ակնառու ճշմարտությունը. գիտակցությունն անգամ անձարակ կլիներ, և մարդկային կեցությունը կզրկվեր իմաստից, եթե չլիներ խոսքը: Սի փոքր էլ չափազանցելով՝ կարող ենք ասել. մարդ տեսակի համար ամեն ինչ սկսվում է խոսքից և ավարտվում խոսքով: Նա և «խոսեցնում» տեղեկություն պարունակող բոլոր օրյեկտները, նաև՝ ապահովում տեղեկատվական բոլոր համակարգերի գոյությունը: Խոսքի անփոխարինելի նշանակությունը ճշտելու համար բավական է միայն մի պահ պատկերացնել, թե ի՞նչ կլինի, եթե այն դադարի գոյություն ունենալ:

Խոսքը կարող է լինել արարիչ, կարող է նաև դատապարտել ոչնչացման՝ նայած թե ո՞վ է օգտագործում այն: Քանզի նա ոչ միայն արձանագրում է մեզանից անկախը, մարդու մասնակցությամբ եղածը, նաև՝ կամա-ակամա ծրագրավորում է լինելիքը: Մենք ամեն ինչ գիտենք այնպես, ինչպես ներկայացվում է խոսքի մեջ: Հետևաբար՝ խոսքային է նաև եղելության գոյակերպը մեր իմացության մեջ:

Եղելությունը (համաժամանակյա կամ տարաժամանակյա իրադարձություններ) ինքնակա է, անկախ է մեր իմացությունից, մեկնարանությունից, իմաստավորումից: Յուրաքանչյուր եղելության նախորդում է պատճառը և հաջորդում հետևանքը: Այս շրթայի ամեն միավորը միաժամանակ և՛ պատճառ է, և՛ եղելություն, և՛ հետևանք՝ նայած թե ժամանակի ինչ կորվածքում է դիտարկվում: Սակայն այս շրթայի մշտապես դերափոխվող միավորների մեջ ամենակարևորը թերևս եղելության գոյակերպն է: Մարդու համար այն փաստի նշանակություն է ստանում, եթե դառնում է լրստ ամենայնի նաև՝ օրյեկտիվորնեն ճանաչված: Ժամանակյի յուրաքանչյուր հատություն եղելությունը փաստի է վերածվում (ներառվում

* Կիսելով հետազոտության պրոցեսից պատմաբանի դիրքորոշման դուրսման անհնարինության մասին Ա. Աղաջանյանի հարցադրումը, միաժամանակ կարծում ենք, որ հետազոտողի անկողմնակալությունն ու գիտական ճշնարտությունը տարբեր բաներ են. կառենի է լինել անկողմնակալ, բայց հաճախ վխալ եղորակացության: Բացի դրանից՝ անկողմնակալ չեն նաև սկզբնադրյունները: Ուստի գոյության ունեն որոշակի սահմանագծեր՝ պատմաբանի դիրքորոշման տցիալական պայմանավորվածության, կանխակալ կարծիքի, առավել և՛ բացահայտ կեղծարարության միջև: Հուսով ենք, որ իր հաջորդ հրապարակումներում այս փոքրածավալ, բայց արժեքավոր հոդվածի հեղինակը կիսուակեցնի նաև այդ սահմանագծերը: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 22. 05. 2011:

է իմացության տիրույթ, փաստվում կամ փաստագրվում է) խոսքով: Դա է մեր զիտակցության մեջ եղելության գոյության հնարավոր միակ, ավելի ճիշտ՝ լավագույն կերպը: Սակայն երբ եղելությունը «վերածվում է» խոսքի, մասամբ կամ ամբողջապես գրկվում է ամբողջականությունից կամ օրյեկտիվ բովանդակությունից: Պատճառները շատ են. նշենք միայն, որ փաստողը կամ փաստագրողը մարդն է, որը մեծագույն ցանկության դեպքում անգամ գրքնականում գրեթե չի կարող.

ա. Եղելությանն իրագեկ լինել ամենայն մանրամասնությամբ,

բ. Եղելությունը փաստել կամ փաստագրել բացարձակ անկողմնակալությամբ (սոցիալական հանգամանքներ, ընդունակություններ, աշխարհայացք, համակրանքներ ու հակակրանքներ և այլն):

Հենց այդ պահից էլ և այդ ու այլ պատճառներով սկիզբ է առնում մեկ այլ բան, որը եղելության հիմքով է, բայց ավելի հաճախ եղելությունը չէ: Դա **պատմությունն է**: Պատմության գոյակերպն առաջին հերթին՝ խոսքային է, և այն մեզ լավ ծանոթ է իրեւ պատճագրություն, մատյան, ուսումնասիրություն, դասագիրք, հանրամատչելի և գեղարվեստական գրականություն, առասպել, էպոս ... Այսինքն՝ ընդհանրացված մարդկային **հիշողության** (հատկապես՝ հասարակական և պատմական²) և **իմացության** բանավոր կամ գրավոր, խոսքային դրսևորման ցանկացած կերպ:

Եղելությունը չի կարող պատմություն դառնալ, քանի դեռ ֆիզիկապես գոյություն ունեն տվյալ իրողությունները որպես կենսագորություն ապրած սերունդները: Հաջորդ սերունդները, իրենց կենսական հանգամանքներից և կենսական անհրաժեշտություններից ենելով, **հետահայաց** (ռետրոսպեկտիվ) իմաստագորմամբ պատմելով կամ վերապատմելով են եղելությունը պատմություն դարձնում: Դա պատմողի միջնորդությամբ՝ եղելության իմաստավորումն է, որը մարդու մշակութաստեղծ գործունեությանը բնորոշ կարևորագույն հանգամանք է ընդհանրապես: Նույնիսկ մեր արարշությունից դուրս և ինքնակա՝ բնությունն ու իր իրողությունները մենք ընկալում, իմաստավորում և արժևորում ենք իրենց օրյեկտիվ գոյակերպը, գոյության իմաստն ու արժեքն արհամարհելով: Մեր վերաբերմունքն այդ ամենի նկատմամբ ոչ թե մեր՝ որպես ամբողջի բաղկացուցչի գոյությամբ հայտնաբերված վերաբերմունք է, այլ նախկին **տիրոջից** ժառանգություն ստացածի լիիրավ տիրոջ պահվածք, որի եսակենտրոն շահն այդ ամենի իմաստավորման միակ դիտանկյունն է:

Ուստի, պատմությունն առավել ևս կայանում է որպես մի փաստ, որի մանավանդ բովանդակությունը կարող է լրջորեն տարրեր լինել եղելության բովանդակությունից: Նրանում, ինչպես արդեն ասվեց, անպայման (բացահայտ կամ անգամ հնարավորին չեզոք պահվածքի բացայալ օրյեկտիվության շրջանակներում) էական մասնակցություն են ունենում **ժամանակի** պահանջմունքը, պատմող **անհատի** եռթյունը³:

Ճիշտ է, թե սխալ, լավ է, թե վատ, միևնույն է՝ եղելության իմացությունը (այնպես, ինչպես մենք ենք այն իմաստավորում) զգալիորեն հեռանում է եղելության

1 Տես Ազարյան Վ., Արվեստի պատմության մասին, «Գարուն» ամսագիր, Եր., 2005 թ., N 9, էջ 27-32:

2 Անհատական, հասարակական և պատմական հիշողության առանձնահատկությունների վերլուծությամբ գրավել են բազմաթիվ գիտնականներ (Ա. Դամբական, Պ. Նորա, Է. Շիլս և այլք): Նրանց տեսակետների ներկայացումը և վերլուծությունը դուրս է հողվածի նպատակադրությունից:

3 Տես Ստեփանյան Ա., «Պատմությունն իրեւ տեքստ, «Պատմություն և կրթություն» ամսագիր, Եր., 2005 N 1-2, էջ 9-22:

ժամանակից, օրյեկտիվ, անկախ կեցությունից ու բռվանդակությունից: Այսինքն՝ մեր գիտակցությունը չի կարող եղելությունը ճանաչել առանց այն պատմության փոխակերպելու, ուրեմն և՝ վերահմաստավորելու: Հետևաբար, շատ կասկածելի է այն համոզմունքը, թե մենք ճշգրիտ գիտենք կամ կարող ենք իմանալ եղելությունն իր բոլոր հանգամանքներով և նախնական, ամրողական բռվանդակությամբ: Դրա համար էլ նույն եղելությունը յուրաքանչյուր անգամ պատմվում է վերստեղծվելով ու վերահմաստավորվելով: Սա հստակ օրինաչափություն է՝ մարդու կենցաղային, կենսագրական իրողություններից մինչև համազգային ու համաշխարհային նշանակության եղելությունները պատմության փոխարկվելու գործընթացում⁴: Դրանում, ինչպես տեսանք, էական է խոսքը:

Պատմությունը կայանում է նաև այլ արտնքակտերով՝ անհատական կամ պետական կարևորության իրեղեն հավաքածուներ (արխիվ, բանգարան)⁵, հուշարձաններ, տեղանուններ, հիշատակի ու տոնակատարության օբյեր, որոց անհատների շուրջ հարզանքի ու մեծարանքի մթնոլորդի ձևավորում և այլը⁶:

Այսպես թե այնպես, ի վերջո, եղելության փոխարկումը պատճության անապահության տեղի է ունենում **ժամանակների համադրության** կամ **հակադրության** (եղելության ժամանակ և պատճողի կամ պատճագրողի ժամանակ) սկզբունքով։ Այստեղ և այսպես հանդիպում են անցյալն ու ներկան։ Այդ հանդիպման ժամանակ անցյալի եղելությունը մեզ համար պատճության է փոխարկվում իմաստավորվելով կամ վերահմաստավորվելով ըստ ներկա պահանջմունքների, հանգանանքների, կենսական անհրաժեշտությունների և մարտահրավերների։ Սակայն այդ հանդիպումն իմաստավորվում է մի կարևոր առումով ևս, որի մասին քիչ հետո...

Եղելությունը պատմության փոխարկվելիս խախտում է ժամանակի վերաբերյալ երեք չափումներով բնութագրվող (**անցյալ, ներկա, ապագա**) մեր գծային և պարզունակ պատկերացումը: Բայց մինչ դրա մասին խոսելը, հարկ է նշել, որ նոյնիսկ նման պարզագույն ընկալման մեջ էլ առկա է մի կարևոր պայմանականություն: **Դա ներկայի և ապագայի հարաբերականությունն է, որն ակնհայտ է առաջին իսկ հայացքից:** Միակ որոշակին և անվիճարկելին **անցյալն** է, որը, անկախ իր տևողության վերաբերյալ (սկզբի անորոշությունը) մեր իմացությունից, անընդհատ և անկատելիորեն մեծացող միավոր է: **Ապագան**, ըստ ամենայնի, նոյնպես մեծ (վերջն անհմանալի է), բայց ամեն ակնթարք նվազող միավոր է: Իսկ **ներկան**, որը մեր ընկալմաներում վայրկյան, բոպե, ժամ, օր և այլն լինելուց զատ, եթե անգամ դար էլ լինի, միևնույն է, փոքր և անկայուն տևողություն է: Էլ չենք ասում խնդիրը տիեզերական անվերջության մեջ դիտարկելու մասին: Անվերջություն, որի համադրությամբ մանավանդ մարդկային կյանքի տևողությամբ որոշակիացող անցյալ-ներկա-ապագա չափումը, ըստ երբյան, աննկատ, անգոր պայմանականություն է: Բայց նոյնիսկ մեր ընկալմաների սահմաններում էլ **ներկան** նաև խարուսիկ միավոր է. այն ամեն ակնթարք անցյալի փոխարկվող ապագան է:

Ժամանակի մարդկային ընկալման վերաբերյալ այս փորձիկ դիտարկումն անզամ ակնհայտ է դարձնում անցուած-ներկա-ապահա միավորներից լուրարան:

⁴ Πιστομάκων αφιετεί λιγήρη οργεκτήψιτερων ήδη από την παραπάνω σημείωση ότι η περιοχή της Καστοριάς ήταν μέρος της Ελλάδας κατά την περίοδο της Αρχαίας Ελληνικής ιστορίας. Σύμφωνα με την θεωρία του Ν. Ι. Σμολένσκι, η Ελλάς διέθετε στην περιοχή της Καστοριάς μεγάλη επιρροή στην αρχαία ιστορία. Το ίδιο έγινε γνωστό στην ιστορία της Ελλάδας με την ονομασία της Καστοριάς. Η ιστορία της Καστοριάς στην αρχαία Ελληνική ιστορία, Μ., 2008, σ. 160-197.

5 Տես «Թանգարան» ամսագիրը, Երևան, 2009, N 1, էջ 17-44:

⁶ Տես Մարության Հ., Դայ ինքնության պատկերագրությունը, հ. 1, Եր., 2009, էջ 27-170.

յուրի նկատմամբ հոգեբանական վերաբերմունքի բնույթը: Պատահական չէ, որ մարդու համար իմաստով լեցուն, խորհրդատու, համեմատաբար կայուն և իմանալի, շատ թե քիչ վստահելի միակ տիրույթն անցյալն է: Ահա թե ինչո՞ւ անցյալին վերադարձը, անցյալը նորից ու նորովի «խոսեցնելու» պահանջմունքը մշտապես տրոփոր պահանջմունք է և՝ շարժային քաղաքացու, և՝ գիտնական մասնագետի, և՝ ազգի համար:

Սակայն եթե շարունակենք խնդրի քննարկումն առօրեական ընկալումներից ու պատկերացումներից դուրս գտնվող հանգամանքներում, ապա հնարավոր կիհնի ցույց տալ ներկայի թեև պայմանական, բայց շատ ավելի «շոշափելի» գոյակերպեր: Դրանցից, նկատի ունենալով հոդվածի բովանդակությունը, կարելի է առաջին հերթին առանձնացնել մեկը՝ պայմանականորեն անվանելով **մշակութային ներկա**: Դրա անորոշ քվացող ընդգրկման մեջ կողմնորոշվելու համար պիտի հաշվի առնել հետևյալը: Անցյալից այն ամենը, ինչը մենք համարում կամ ընկալում ենք որպես մեզ վերաբերող, մեր նկարագրի ու կենսակերպի առունով էական, շարունակում է գոյատել ու մասնակից լինել մեր ֆիզիկական ներկային: Եվ հակառակը: Հետևաբար, անցյալին վերաբերող մեր **իիշողության** դաշտը որոշակիորեն բովանդակավորված ռեալություն է, որը ծևավորվում է որոշակի ընտրությամբ գոյացած մշակութային արժեքների խմբով: Եվ անհատները, և՝ ազգերը, թեկուզ բազմաթիվ միջնորդավորումներով, զգալիորեն դրանով են հմաստավորում իրենց ֆիզիկական ներկան ու ապագան: Ընդ որում, պիտի նկատի ունենալ, որ այս դեպքում մշակութային ներկան ու հմացությունը դառնում են միանգամայն տարբեր ընդգրկումներով հասկացություններ: Տարբեր աղբյուրներից ձևավորված **իմացության** նույնիսկ հսկայական ծավալից կարող է մի չնչին մասը միայն վերածվել մշակութային ներկայի: **Միայն այն մասը, որն անկախ ժամանակների ու սերունդների հեռավորությունից, այդ իիշողությունը կրող անհատը կամ սերունդն ապրում ու վերապրում է իբրև անձնական ճակատագիր:**

Կոնկրետ ժամանակից ու կենսական հանգամանքներից վերացարկմամբ ձևավորվող ներկայի մի տարրերակն էլ կարելի է անվանել **երևակայական ներկա**: Սա դրսենորվում է երևակայական (նոտապատկերներ) կամ պայմանական ռեալության (դեկորացիա) հանգամանքներում: Երևակայական ներկան ըստ էության խաղն է (և՝ մանուկների, և՝ մեծահասակների) և օժտված մարդու ստեղծագործական աշխատանքք: Մարդու գործունեության այս ձևի մեջ ներկայի դրսենորման առանձնահատկություններին անդրադարձը ավելի շատ վերաբերում է թերևն՝ արվեստագիտությանը, հոգեբանությանն ու մանկավարժությանը, որի պատճառով էլ այն մանրամասներու առաջադրանքը հարկ է բողնել ավելի տեղին առիթի: Բայց մի նկատառում անելու հրապուրանքից չենք ուզում մեզ զրկել: «Աս հետևյալն է. ներկայի այս տարբերակը հեշտությանք իր մեջ է ներառում ոչ միայն իր արարողին, այլ նաև իր պայմանականությանը հարաբերվող հաղորդակից մարդկանց: Այժմ դրան զգալիորեն նպաստում են նաև օգտագործվող տեխնիկական միջոցները:

Սակայն վերադարձներ ներկայի դրսենորման առանձնացված տարբերակի դիտարկմանը, որի վերաբերյալ ասվածը կարելի է ամփոփել այսպես: Արդեն նշեցինք, որ պատմությունը կայանում է եղելության (անցյալ) և պատմողի կամ պատմագրողի (ներկա) ժամանակների հանդիպման ձևով: **Թեև ներկան հարահու ակնթարթ է, բայց անտեսել չի կարելի, որովհետև հենց նշված հանդիպումով է ոչ**

միայն իմաստավորվում կամ վերահմաստավորվում անցյալը, այլև կոդավորվում ապագան: Պատմվելով կամ վերապատմվելով՝ ձևավորվող պատմությունը, կամա թե ակամա, ամբողջացնում-ամրապնդում է ազգային տարրերակիշ առանձնահատկությունների այն խումքը, որն ընդունված է անվանել **արժեհամակարգ:** Նաև՝ դրանք մարմնավորող ազգային (հաճախ էլ այլազգի) այն գործիչներին, որոնք աստիճանաբար դառնում են **արքեստիպեր:** Արժեհամակարգը պահպանելը, արթեստիպերին ընդօրինակելը և հաջորդ սերունդներին ոչ միայն փոխանցելը, այլ նաև նրանցից նախանձախնդրութեն նույնը պահանջելը դառնում է անգամ զփտակցված, բայց կենսական կարևորություն ունեցող համազգային նպատակ, վարքագծի նեկավար, գոյուրյան իմաստ: «Դրա համար էլ կարելի է վստահորեն պնդել, որ դեռևս գոյատևող ազգերի կյանքում ի՞նչ լինելու է՝ արդեն եղել է (պատմության մեջ), ինչ ասվելու է՝ վաղուց ասվել է (պատմության մեջ): **Այսինքն՝ եղելությունների կրկնություններն՝ ըստ այնմ, թե մենք նրանց ինչ իմաստներ ենք վերագրում, հաճախ անխուսափելի են այնքանով, որքանով որ պատմության միջոցով դրանք նախապատրաստվում-ծրագրավորվում են:** Ուստի՝ արդեն դժվար չէ գիտի ընկնել, որ ապագայի ծրագրավորումը տեղի է ունենում երկու ձևով. կամ եղելությունը գաղափարականացնելով (եղելության պատմություն), կամ գաղափարը պատմականացնելով (պատմությունն իրու եղելություն): Առաջինը եղելության իմաստավորումն է, երկրորդը՝ չեղած, բայց անհրաժեշտ եղելության հորինումը:

Պատմության գոյության իմաստն ու նպատակն ազգային հոգեկերտվածքի, ինքնազիտակցության ձևավորումն է: Նշանակալին այն է, որ նրա կարևորագույն՝ իր գոյությունն իմաստավորող գործառույթը մազաչափ անգամ չի պահվանում նույնիսկ այն դեպքում, եթե պատմողն ինքը չի գիտակցում դա: Իսկ պատմվում է, ըստ էության, ոչ թե այն, ինչ և ինչպես իրականում եղել է, այլ ըստ արդեն իսկ ձևավորված արժեհամակարգի պահանջարկ ունեցողը, կամ այն, ինչը իշխնակորում է այդ արժեհամակարգի անհրաժեշտությունը, ճշմարտացիությունը, նպատակահարմարությունը:

Ինքնըստիճայան հասկանալի է, որ մենք ել, մեր ձևավորած պատմության (եղելությունների իմաստավորման) արդյունքում դարձ դարի վրա ունեցել ենք այն, ինչն ակնհայտ է որպես ազգի փաստացի կեցություն։ Իսկ դրանից հժվար չէ զիսի ընկնել, որ մեր կեցությունը բացարձակ նույնական է մեր արժեհամակարգին և ազգային ինքնազիտակցության կողմանորվածությանը⁷։

Ասվածն ապացուելու համար կարելի է վկայաբերել մի շարք օրինակներ, որոնք մեր կեցության և գիտակցության նորմերից են:

- Մենք զարմանում ու փորձում ենք հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է բազմա-
թիվ ճակատամարտերում հաղթելուց հետո ի վերջո պատերազմը տանոլ տալ
(Սպարտակ, Հանիբալ, Նապոլեոն և այլք): Բայց նույնիսկ չենք էլ փորձում հաս-
կանալ, թե այդ ինչպե՞ս կարող է հաղթանակը ... բարոյական լինել, իսկ ողբեր-
գությունը՝ նույնիսկ ... լավատեսական:

- Մենք մեզ համոզել և փաստորեն շարունակում ենք համոզել, որ անցյալում հիմնականում պետականությունից գործ ժողովուրդ ենք եղել, այսինքն՝ հիմա էլ չենք կարող ունենալ:

- Իբրև մենք մշտապես մաքառել ենք ու պայքարել (իմա՞ դիմացել) գոյատևման

7 Տե՛ս Նալշաջյան Ա., Երմիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 48-74.

համար, այսինքն՝ գոյատևումն է եղել հազարամյակների մեր գերխնդիրը:

-Պետականություն չունեցած ժամանակ մեր եկեղեցին իր՝ փոխարնել է նրան. մեր եկեղեցուն մեծարելու ակնհայտ նպատակով այսպես ասողները չեն ել գիտակցում, որ եկեղեցուն ու հոգևորականությանն ավելի լուրջ մեղադրանք չի էլ կարելի ներլայացնել, որովհետև մեր մեծագույն և անդառնախ կորուստները եղել են հենց պետականությունից գործի շրջանում:

-Մեր ձախողումների և կորուստների մեջ մեղավոր են աշխարհի հզորները, որոնք մեզ կամ հալածել ու կոսորել են, կամ կարող էին հոգանավոր լինել, բայց չեն եղել:

-Ազգի մեր տեսակի վերաբերյալ մեր և այլոց պատկերացումները սովորաբար ձևավորում ենք քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանից սկսած, քանզի վստահ ենք, որ հենց այդ քվականին և այդպես գիտապատառ քրիստոնեանալը շատ անհրաժեշտ էր ու միակ ճիշտ քայլն էր, որպեսզի չձուլվեինք այլոց:

-Մեզ համար լրացոցից փաստեր բերելու անհրաժեշտություն երեք էլ չի եղել, որպեսզի մի ավելորդ անգամ էլ համոզվենք հայի անմիաբանության արքիոնայի մեջ. մեր մի մասն անսխալական, անքննելի հայրենասեր է, մյուար՝ դավաճան. ոչ թե՝ այլընտրանք փնտրող, առկա ստերեոտիպերին չհամակերպվող, այլ անպայման դավաճան:

-Այս աշխարհում հայի առաջնահերթ կոչումն է հոգևոր արմեքներ ստեղծելը և դրանց մեջ իր գոյության երաշխիքը տեսնելը:

-Հայր կովող է, պատերազմում անվախ, իսկ բուրքը՝ ոչ. մեզ նեղություն չենք տալիս հասկանալու, թե այդ ինչպե՞ս պատահեց, որ չկրվող բուրքն իրեն երեսէ շպատկանած տարածքների վրա ձևավորեց երեք պետություն (Թուրքիա, Աղրբեշան, Հյուսիսային Կիպրոս): Իսկ մենք ...

-Ոչինչ, որ Աղրբեշանը տնտեսապես և զինական ուժով մեզնից արդեն առավել է: Դրան հակակշիռ՝ մենք ուժեղ ենք ոգով և կամքով ու հնարավոր նոր պատերազմում ամպայման հասրելու ենք. մենք չենք ուզում մեզ հաշիվ տալ, որ ոգու և կամքի ամրությունը եթե գործ է տնտեսական թիկունքից (թերևս հիմար չեն այդ տեղում միջոցներ չխնայող ժողովուրդներն ու պետությունները), ուղիղ գծով տանում է ընդամենը նահատակության, որի «քարիբները» մենք շատ ենք ճաշակել:

-Մենք քարիքը վերածում ենք չարիքի՝ անընդհատ մեզ համոզելով, որ ամուր ընտանիքն է պետության հզորության երաշխիքը. այդպես մեր ընտանիքների բարորությունը մեզ համար դառնում է գերխնդիք՝ բացառելով համազգային այլ կառույցների կարևորության ընբռնումը և դրանց համար շահագրգռությունը:

-Եվ այլն, և այլն ...

Վերևում ասվածից ակնհայտ է, որ պատմությունը, մեծագույն ցանկության դեպքում անգամ, չի կարող արտացոլել եղելության օրյեկտիվ բովանդակությունը: **Պատմությունը զգալիորեն ատցիալ-քաղաքական պատվերի արյունը է: Հետևաբար շատ զգույշ պետք է լինել՝ հաշվի առնելով, որ պատմությունը թեև կայանում է անցյալի նյութով, բայց ձևավորում է էքնիկ ինքնագիտակցությունը և նախակառուղղված է ապագային:** Ուստի յուրաքանչյուր վրիպում կարող է անհատուցելի կորուստների պատճառ դառնալ:

Այսօրվա մեր կենսակերպը, կենսական կողմնորոշումներն այս առումով լրջո-

ին մտահոգվելու առիթ են տալիս: Մասնավորաբար այն, ինչը բնորոշ է մեր վարդագծին ու նկարագրին՝ օտարների և յուրայինների հետ շփումներում: Առաջին դեպքում մենք ինքնաստորացման չափ շահադիտականորեն օտարասեր ենք: Այստեղ ինքնասիրության մեր կորուստները հետևողականորեն փոխհատուցում ենք եքնիկ շրջանակներում միջամարդկային այնպիսի փոխհարաբերություններով, որոնց բնորոշ բռնությունը, ստորակարգության ընդգծումը մեզ հաճար անքառոյց հիացմունքի ու բավարարվածության աղբյուր է, ինքնահաստատման ձև: Ընդ որում, ցավալին այն է, որ սա եքնիկ նկարագրի հատկանիշ է դառնում՝ վարակելով սոցիալական բոլոր շերտերին: Դժվար չէ զիսի ընկնել, որ սա ստրուկի (ոչ թե սոցիալական կարգավիճակով, այլ հոգեկերտվածքով ստրուկի), ինքն իր տեսակից խոռվածի վարքագիծ է:

Բոլորովին ել մտադիր չենք գույները բանձրացնել, բանզի մեզ վերաբերող պատմության արդյունքը՝ **ներկան**, այնքան է մտահոգիչ, որ դա ուղղակի ավելորդ գրադարձնելու կիմնի: Ժամանակն է հանուն վաղվա կանգ առնել և **լրջորեն վերագնահատել** մեր ճակատագրում ու **նկարագրում մեր իսկ հյուսած պատմության գաղափարախոսական հշանակությունը:**

Հասկանալի է, որ դա հեշտ գործ չի լինելու⁸: Բայց նահանջի ու կորուստների վերջին սահմանին հասածի սրափ մոտեցմամբ դեռևս կարելի է որոշակիացնել մեր գիտով անցածը վերապատմելու և՝ մերողաբանությունը, և՝ տեսությունը՝ անզիջում մրցակցության հրապարակ դարձած այս աշխարհում արժանապատիվ գոյության հեռանկար երաշխավորող մեր կոնցեպտը ձևավորելու համար: Հասկանալի է, որ այս անհետաձգելի գործում առաջնահերթ դեր ու պատասխանատվություն պիտի ստանանեն հատկապես հայագետ մտավորականները: Անկեղծ, ակտիվ գիտական քննարկումներից դեպի ազգի ճակատագրով նտահող հասարակական կարծիքի (խմբակայնությունից) և սովածների կամ ճարպակալածների օրախնդիր շահերից անկախ կարծիքի) ձևավորումը և գործնական, սրափ, նպատակամետ քայլերի հաշվարկը դյուրին խնդիր չէ: Սակայն նորօրյա մարտահրավերները մեզ այլընտրանք չեն բողնում: Հասունացել է կանգ առնելու և արկա իրավիճակը սրափ գնահատելու ժամանակը:

Summary

OCCURANCE, HISTORY AND NATIONAL SELF-CONSCIENCE

Sergey A. Aghajanyan

In the article the author discusses the relation between event, speech, history. History is presented as an expression of a history of human interpretation that can be completely different from objective reality. The interrelation between times is very important in history (time of the event and time of the teller). Not only is the past interpreted in the small period of the present (history is born), but the future is also planned. With the past told and retold, a national system of values and archetypes are formed. Based upon this, the nation forms its future. In the end, examples on value expressions of thinking and behaviour are brought forth, which now are alienated among the Armenians.

⁸ Տե՛ս Տարեգիրների ժամանակը, «Վեմ» համահայկական հանրես, Եր., 2011 թ., N 1 (33), էջ 3-11: